«Հաստատում եմ»

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան»

հիմնադրամի ռեկտոր,

տեխն. գ. դ. պրոֆեսոր _____ Ռ. Ռ. Սահակյան

«06» 2021 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Անի Գագիկի Մազմանյանի «Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստումը մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակներում» թեմայով ԺԳ .00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Անի Գագիկի Մազմանյանի «Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստումը մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակներում» թեմայով ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի նիստում (Արձ. թիվ 23, կայացած՝ 15.06.2021թ.):

Մասնակցում էին «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի վարիչի ժ.պ., մ.գ.թ. դոցենտ Լ. Բաղդասարյանը, ամբիոնի դասախոսներ՝ մ.գ.դ. պրոֆեսոր Պ. Գևորգյանը, մ.գ.թ. դոցենտ Ս. Բեժանյանը, մ.գ.թ. դոցենտ Ա. Հովհաննիսյանը, մ.գ.թ. դոցենտ Ա. Հարությունյանը, մ.գ.թ. դոցենտ Ք. Վիրաբյանը, հ.գ.թ. դոցենտ Հ. Ավագիմյանը, հ.գ.թ. դոցենտ Ա. Ղազարոսյանը, հ.գ.թ. դոցենտ Ն. Կոստանդյանը, հ.գ.թ. դոցենտ Մ. Շահվերդյանը, հ.գ.թ. դոցենտ Մ. Մազմանյանը, մ.գ.թ. Լ. Մարուքյանը, մ.գ.թ. Լ. Դանիելյանը, հ.գ.թ. Վ. Եղիազարյանը, Տ. Մալումյանը, Ն. Հովսեփյանը:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է բարձրագույն մասնագիտական կրթության առջև դրված մարտահրավերներով: Որակավորումների ազգային շրջանակի (այսուհետ՝ ՈԱՇ) մշակումը կարևոր և առանցքային քայլ է

եվրոպական բարձրագույն կրթական տարածքին (ԵԲԿՏ) միանալու համար: ՀՀ-ում ՈԱՇ-ը դեռ լիարժեք չի գործում, քանի որ այն շատ դեպքերում սահմանափակվում է մշակութային, ազգային և ինստիտուցիոնալ խնդիրներով, որոնք հիմնականում չեն արտացոլվում բուհերի բարելավմանն ուղղված ծրագրերում և գործընթացներում:

Կրթական համակարգում ՈԱՇ-ն ուղեցույց է որակյալ կադրեր պատրաստելու համար, սակայն այն նույն ձևով չի ընկալվում գործատուների կողմից: ԵԲԿՏ ՈՇ-ի ինքնահավաստումը կարող է նպաստել ՀՀ-ում կրթության շարունակական բարելավմանը, հանրության կողմից մասնագիտական կրթության նկատմամբ վստահության բարձրացմանը, միջազգային մակարդակում կրթական ծրագրերի համադրելիության և փոխճանաչելիության բարձրացմանը, անձի շարունակական կրթությանը և զարգացմանը:

Ներածության մեջ ատենախոսը հստակ սահմանել է հետազոտության նպատակը, խնդիրները, հետազոտության գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը և պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Հետազոտության նպատակն է բացահայտել և հիմնավորել ՀՀ ՈԱՇ-ի ինքնահավաստման առանցքային դերը մասնագիտական կրթության որակի շարունակական ապահովման գործընթացներում:

Աշխատանքի կառուցվածքը տրամաբանորեն արտացոլում է նպատակին հասնելու համար նշված խնդիրների լուծման ուղիները:

Պայմանավորված իր առջև դրված խնդիրներով՝ ատենախոսն առաջին գլխում ներկայացնում է որակավորումների շրջանակները և դրանց մշակման ուղիները՝ որակավորումների մետաշրջանակների և դրանց հիման վրա ազգային շրջանակների ստեղծման նախապայմաններն ու դրանց պատմական զարգացումը եվրոպական բարձրագույն կրթության տարածքում, քանի որ դրանք կարևոր են բարձրագույն կրթական համակարգի կազմակերպման, իրականացման և բարելավման համար:

Աշխատանքի երկրորդ ենթագլխում դիտարկում է ՈԱՇ-ը որպես մասնագիտության կրթական ծրագրերի մշակման մեթոդաբանական հիմք: Ըստ ատենախոսի ՈԱՇ-ը ապահովում է *վերջնարդյունքահեն* կրթություն, սակայն, շատ դեպքերում, շրջանավարտի դիպլոմում նշված մասնագիտության և որակավորման աստիճանը դեկլարատիվ բնույթ է կրում: Փորձը ցույց է տալիս, որ գործատուները կարևորում են «աշխատողի

կարողությունները, հմտությունները և ներուժը, քան ստացած որակավորումը՝ որպես պաշտոնական հավաստագիր» (էջ 51):

Իրականացնելով համեմատական վերլուծություն՝ ատենախոսը առանձնացնում է եվրոպական որակավորումների (այսուհետ՝ ՈԵՇ) 6-8-րդ շրջանակների վերջնարդյունքների ընդհանրական բնութագրիչները, որոնք հատկորոշիչ են բարձրագույն մասնագիտական կրթության մակարդակներին: ՈԵՇ-ը որպես մեթոդաբանական հենք կիրառելի է որակավորումների տարբեր համակարգերում՝ հնարավորություն տալով ԿԾ մշակել վերջնարդյունքների վրա հիմնված մոտեցումներով և նպաստել ոչ ֆորմալ կրթության արդյունքների վավերացմանը:

Ատենախոսության երկրորդ գլխում՝«ՀՀ որակավորումների ազգակին շրջանակը որպես մասնագիտության կրթական ծրագրերի մշակման մեթոդաբանական հիմք» ներկայացված են վերջնարդյունքահենք կրթության կազմակերպման և իրականացման գործընթացները, որակավորումների և կոմպետենցիաների վրա հիմնված մոտեցումների որակական տարբերությունները: Իրականացված են միջազգային փորձի մետաշրջանակների և ՀՀ-ի 10 բուհերի ԿԾ-ի մշակման, ՈԱՇ-ի համապատասխանության համեմատական վերլուծություն: Արդյունքում հեղինակը գալիս է այն եզրակացության, որ ՀՀ բուհերում թերի են մշակված և թերի են կիրառվում ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչներին համապատասխան ԿԾ-ի վերջնարդյունքների մշակման վերաբերյալ մեթոդական փաստաթղթերը: Հետազոտության արդյունքում վերհանված խնդիրները և դրանց լուծման եղանակներն ուղեցույց են ՀՀ-ում ազգային առանձնահատկությունների հիման վրա ՈԱՇ-ի բարելավման, արդյունավետ մշակման և կիրառման համար:

«Բարձրագույն կրթության ոլորտում շնորհված ՀՀ որակավորումների ազգային շրջանակին համապատասխանեցնելու մեխանիզմները» ենթագլխում վերլուծվել են միջազգային փորձից վերցված այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս համապատասխանացնել բարձրագույն կրթության ոլորտում շնորհված որակավորումները ՀՀ ՈԱՇ-ին:

Ատենախոսության երրորդ գլխում՝«Որակավորումների ազգային շրջանակի գնահատումն ինքնահավաստման միջոցով» հեղինակը, արժևորելով որակի ապահովման եվրոպական չափանիշների ներդրումը, որպես որակի ներքին ապահովման և արտաքին

գնահատման միջոց, Բոլոնյան գործընթացի համատեքստում կարևորում է նաև որակավորումների համընդհանուր շրջանակը, քանի որ այն նախադրյալ է կրեդիտների և որակավորումների ճանաչման համար:

ՈԱՇ-ի մշակումը մի քանի փուլից բաղկացած գործընթաց է, որտեղ ինքնահավաստումը ԵԲԿՏ ՈՇ-ի համապատասխանության ապահովումն է: Ատենախոսը մանրամասն ուսումնասիրել և անդրադարձ է կատարել ՈԱՇ-ի մշակման վերջին փուլին՝ ինքնահավաստմանը: Բոլոնյան գործընթացում ներգրավված երկրներն ընդունել են ինքնահավաստման համար մշակված 7 չափանիշներ, ՈԱՇ-ների հավաստման ընթացակարգեր, որոնց նպատակն է ապահովել տվյալ գործընթացի իրավասու ազգային մարմինների կողմից միջազգային փորձագետների հետ սերտ համագործակցությունը (էջ 90): ՀՀ-ում ինքնահավաստման փորձը հիմնականում սահմանափակվում է ինքնավերլուծության զեկույցով, համապարփակ ուսումնասիրություններ, վերլուծություններ, հանրային քննարկումներ պատշաճ չեն իրականացվում:

Աշխատանքի խնդիրներից է ներկայացնել ՀՀ ՈԱՇ-ի ինքնահավաստման մոդել, որտեղ ներառված են ռազմավարական և գործառնական մակարդակներում ներգրավված դերակատարների համագործակցության շրջանակը՝ դրանով իսկ հստակեցնելով ինքնահավաստման կարևորությունը մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակում:

Ատենախոսության հիմնական դրույթները արտահայտված են ատենախոսի 9 հոդվածներում:

Վերոնշյալ դիտարկումները որոշակիորեն խոսում են այն մասին, որ ատենախոսությունն ինքնուրույն և յուրօրինակ կիրառական բնույթի գիտական հետազոտություն է:

Ատենախոսության և սեղմագրի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու որոշ թերություններ և վրիպումներ, որոնք չեն արժեզրկում աշխատանքը.

1. Աշխատանքում ներկայացված չեն հապավումների բացատրությունները:

2. Ատենախոսության մեջ հավելված 1-ը (էջ 69) նշված է որպես Բլումի աստիճանակարգումը, իսկ իրականում տեղադրված է այլ փաստաթուղթ (ատենախոսության մեջ կիրառված եզրույթների հայերեն համարժեքները):

3. Հետազոտության մեջ բավականին հանգամանորեն վերլուծության են ենթարկված որակավորումների մետաշրջանակները, ՈԱՇ-ը, սակայն հպանցիկ է նշված ոլորտային շրջանակը, թեպետ այն կարևոր նշանակություն ունի վերջնարդյունքահեն կրթական ծրագրերի մշակման և հավաստագրման գործընթացի կազմակերպման համար:

4. Հետազոտությունները իրականացվել են էմպիրիկ մակարդակով՝ հավաքագրված տեղեկատվության և համեմատական վերլուծության միջոցով, այն դեպքում, երբ առաջարկվող ՀՀ ՈԱՇ-ի ինքնահավաստման մոդելի կազմակերպման ձևը կարող է ՈԱՇ-ի հետագա կատարելագործման նոր մեթոդաբանական հիմք հանդիսանալ:

Եզրակացություն

1. Անի Գագիկի Մազմանյանի «Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստումը մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակներում» թեմայով ատենախոսությունը գիտական, հետազոտական համապարփակ աշխատանք է:

2. Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ընդգրկում է հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունն ու սեղմագիրը շարադրված են գրագետ և գիտական լեզվով:

3. Անի Գագիկի Մազմանյանի «Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստումը մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակներում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի և ԲՈԿ-ի կողմից ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է գիտական աստիճանի շնորհմանը:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժ.պ.,
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ _____ Լ. Գ. Բաղդասարյան

Լ. Գ. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ
ՎՊՀ-ի գիտ. քարտուղար,
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ _____ Ս. Հ. Բեժանյան